

ՀՐԱՉ ԶԱՂՈՅԱՆ

2015 թ. հունիսի 11-ին, ժամը 14-ին Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում պրոֆեսոր, հրապարակախոս **Հրաչ Զաղոյանի** հետ: Հայաստանի ազգային գրադարանի բարեկամ Հրաչ Զաղոյանը գրադարանին է նվիրաբերել մեծաքանակ գրականություն: Նվիրատվության մի փոքր մասը ներկայացվեց թամանյանական մասնաշենքի մեծ ցուցասրահում: Հրաչ Զաղոյանի ազգային, հասարակական գործունեությունը ներկայացրեց «Համազգային» հիմնադրամի նախագահ, քաղաքագետ Լիլիթ Գալստյանը: Հայ մշակույթին մատուցած ծառայությունների, ազգային, հասարակական կյանքում ունեցած ավանդի համար Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը «Հակոբ մեղապարտ» հուշամեդալով պարգևատրեց Հրաչ Զաղոյանին:

Ազգային գրադարանի հավաքածուները համալրելու գործում ակտիվ մասնակցության ու նախաձեռնողականության, հայ գրավոր մշակույթի հուշարձանների պահպանության ու սերունդներին փոխանցման գործում ունեցած ավանդի համար Ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը «Հակոբ մեղապարտ» հուշամեդալով պարգևատրեց նաև ազգային գրադարանի բարեկամ «Մեծն Ներսես» հասարակական բարեգործական կազմակերպությանը: